

7643

# ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԱՍԵՐԻԿԱՅԻ Ս. Դ. ՀՆՁՍԿԵԱՆ  
ՄԱՍՆԱՃԻԻՂԵՐՈՒՆ



Տ Գ Ա Ր Ա Ն  
«ՍՏՐԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ»  
Ե Ի Ր Ա Վ Օ  
1917

329.142

4-21



329.143

4-21

55 2001

# ԿԱՆՈՆԱԳԻՐ

## ԱՄԵՐԻԿԱՅԻ Ս. Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ՄԱՍՆԱՃԻԻՂԵՐՈՒՆ

### ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Յօդ. 1.— Ամեն անոնք (սուանց սեռի խարութեան), որոնք տասն եւ ութը տարին լրացուցած են եւ կընդունին Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան սկզբունքները, կուխտեն հաւատարիմ մնալ անոր Սրբազան Դրօշին եւ կը կատարեն Ս. Դ. Հնչակեան զինուորի մը յատուկ բոլոր պարտականութիւնները, կընդունին անդամ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան:

Յօդ. 2.— Իւրաքանչիւր նորեկ անդամ (այլ թէ կին), Մ-Տիւղի ընկերներու ներկայութեամբ՝ պարտաւոր է կատարել իր երզումը:

«Կուխտեմ Հայ Ազատագրութեան սրբազան դատին համար ինկող ցահատակներու անունով, հաւատարիմ մնալ Ս. Դ. Հնչակեան Կանոնագրի բոլոր»

*Handwritten signature or mark.*

պահանջներուն եւ Ս. Դ. Հնչակեան ծրագրի մէն մի յօդածին իրագործումին համար տրամադրել ֆիզի-  
քական, մտաւորական ու բարոյական ոյժերս եւ  
գործնականացնել այդ սկզբունքները իմ կեանքիս  
մէջ» :

Յօդ. 3.— Իւրաքանչիւր անդամ պարտաւոր է  
իրբեւ մուտք վճարել 1 տօլար կամ աւելի եւ աշու-  
հետեւ 1 տօլար անդամավճար : Կիներ եւ օրիորդներ  
25 սէնդ մուտք եւ 10 սէնդ ամսական վճարելու  
են : (\*)

Յօդ. 4.— Իւրաքանչիւր նորեկ անդամ պար-  
տաւոր է ներկայացնել Մասնաճիւղի անդամներուն՝  
առնւազն երկու հոգի, իրբեւ երաշխաւորութիւն իր  
ազնիւ վարույց եւ անձնէր հաւատարմութեան :

Յօդ. 5.— Իւրաքանչիւր Հնչակեան անդամ  
կէտ առ կէտ պարտաւոր է կատարել այն բոլոր  
պարտականութիւնները՝ որոնք ընդթւած են ներ-  
կայ կանոնագրի մէջ :

Յօդ. 6.— Իւրաքանչիւր անդամ պարտաւոր է  
անպատճառ ներկայ գտնուիլ Անդամական Ժողով-  
ներուն, հակառակ դէպքին պարտաւոր է չաջորդ  
Ժողովին ներկայացնել իր բանաւոր պատճառները :

Յօդ. 7.— Անդամ մը Անդամական Ժողովին  
առաջին բացակայութեան՝ կազարարւի, երկրոր-  
դին՝ կը չանդիմանի, իսկ երրորդին՝ կենթարկւի

(\*) Մասնաճիւղը անդամավճարներէն հաւաք-  
ած գումարին մէկ երրորդ մասը կը պահէ իր գան-  
ձին մէջ՝ տեղական ծախքերու համար, իսկ մնաց-  
եայ երկու երրորդ մասը պարտաւոր է զրկել Գործ.  
Յանձնախումբին :



79525-ակ  
690-87

տուգանքի :

Յօդ. 8.— Անդադոնապահ ընկեր մը կը չան-  
դիմանի ընկերներու ներկայութեամբ եւ կը զրկւի  
իր բոլոր իրաւասութիւններէն երեք ամիս՝ կատա-  
րելով միանգամայն իր բոլոր պարտականութիւն-  
ները :

Յօդ. 9.— Անդամ մը որ առանց չարգելի պատ-  
ճառներու (հիւանդութիւն, անգործութիւն, չքա-  
ւորութիւն) երեք ամիս չէ վճարած իր անդամ-  
վճարները, կը դադրի Մասնաճիւղի անդամակցու-  
թենէն :

Յօդ. 10.— Այն ընկերը որ Կուսակցութեանս  
սկզբունքներուն հակառակ կը գործէ եւ կասկածե-  
լի արարքներու մէջ կը գտնուի, նախ՝ կազարարւի  
եւ երբ ազդարարութիւնը ապարդիւն վնայ, Գործ.  
Յանձ.ի վերաքննութենէն յետոյ կարտաքաւի կու-  
սակցութենէն եւ չըջարեականով կը հաղորդւի  
Կուսակցութեան Կեդր. Վարչութեան եւ Մասնաճիւ-  
ղերուն :

Յօդ. 11.— Ամեն անդամի վրայ պարտք կը  
դրւի «Երիտասարդ Հայաստան»ի բաժանորդ գրելի :

Յօդ. 12.— Իւրաքանչիւր անդամ պարտաւոր  
է խիստ զաղտնապահ լինել Կուսակցութեանս ներ-  
քին գործերու վերաբերմամբ :

ՄԱՍՆԱՃԻՒԴ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յօդ. 13.— Եօթը ընկերներէ կամ հինգ ընկե-  
րուհիներէ բաղկացած Մասնաճիւղ մը օրինաւոր  
կը ձանչցւի : (Այն տեղերը որ վերոյիշեալ թիւը ներ-  
կայացնող անդամներ կը պակսին եւ երեք անդամէ  
պակաս չեն, կը կոչւին Ս. Դ. Հնչ. Խումբ, որ ոչ

կնիք կունենան եւ ոչ ալ պաշտօնական գրութիւն կը զրկուի, ալ Գործ. Յանձ.ը իր հարկ տեսած հաղորդակցութիւնը միայն կը կատարէ :

Յօդ. 14.— Իւրաքանչիւր Մասնաճիւղ կընտրէ վարչութիւն մը բաղկացած 3-5-7 անդամներէ :

Յօդ. 15.— Մասնաճիւղի վարչութիւնը անդամական ժողովներու որոշումները եւ անոր ընթացիկ գործերը լրիւ գործադրող մարմինն է, որը իր մէջէն կընտրէ իր Դիւանը :

Յօդ. 16.— Մասնաճիւղի վարչութեան պաշտօնավարութեան շրջանը կը տեւէ 6 ամիս : Վարչութիւնը վերընտրելի է եթէ արժանի է :

Յօդ. 17.— Մասնաճիւղի վարչութիւնը պարտաւոր է իրեն եկած պաշտօնական գրութիւնները ներկայացնել Անդամական Ժողովին :

Յօդ. 18.— Իւրաքանչիւր Մասնաճիւղ իր ներքին գործերը կարգադրելու ազատ իրաւունք ունի :

Յօդ. 19.— Իւրաքանչիւր Մասնաճիւղ պարտաւոր է ամիսը անգամ մը Անդամական Ժողով գումարել :

### ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յօդ. 20.— Անդամական Ժողովը Մասնաճիւղի վերաբերեալ ընթացիկ գործերու մասին որոշում տուող պաշտօնական մարմինն է, որ կազմած է տեղական ընկերներէ եւ ընկերուհիներէ :

Յօդ. 21.— Ընկերուհիներ կարող են եւ եթէ կուզեն առանձին կը գումարեն իրենց ժողովները որպէս ուրոյն Մասնաճիւղ, եթէ օրինական թիւը կը լրացնեն, առաջնորդելով սոյն կանոնագրութեամբ :

Յօդ. 22.— Անդամական Ժողովներու օրակարգը կը պատրաստէ վարչութիւնը, սակայն Ժողովի Ժամանակ անդամներու կողմէն ալ կարող են հարցեր առջարկել :

Յօդ. 23.— Անդամական Ժողովի բացումը կը կատարուի նախորդ Ժողովի արձանագրութիւնը կարգաւորելու եւ վաւերացելով :

Յօդ. 24.— Վարչութիւնը պարտաւոր է պահել Անդամական Ժողովներու արձանագրութիւնը :

Յօդ. 25.— Մասնաճիւղի վարչութեան Ատենապետը, Ատենադպիրը, Գանձապահը եւ Կնքապահը աչն պաշտօնը ունին ինչ որ ունին Գործադիր Յանձնախումբինը : (Տես չօդած 63)

### ՄԱՍՆԱՃԻՒԳԵՐՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Յօդ. 26.— Իւրաքանչիւր Մասնաճիւղ (արանց թէ կանանց) ուրիշ ֆաղաք մը փոխադրող իր մէկ անդամին պէտք է չանձնէ չանձնարարական մը որը ներկայացնէ իր նոր կնայցած տեղի Մասնաճիւղի վարչութեան :

Յօդ. 27.— Իւրաքանչիւր անգամ իրաւունք ունի բողոքել թէ՛ Վարչութեան եւ թէ՛ Անդամական Ժողովի ապօրինի արարքներուն դէմ՝ Գործ. Յանձնախումբին եւ Ամերիկայի շրջանի Պատգամաւորական Ժողովին :

Յօդ. 28.— Մասնաճիւղերու վարչութեան կամ պարզ անդամներէն մէկին հրաժարման դէպքին, գրաւոր հրաժարականը պէտք է քննուի Անդամական Ժողովին մէջ եւ ըստ այնմ կարգադրութիւն ըլլայ :

Յօդ. 29.— Մասնաճիւղ մը երբ նկատէ իր վարչութեան սեւէ մէկ զեղծումը, իրաւունք ունի

իսկոյն հրաժարեցնել եւ ընտրել նորը, տեղեկագրելով Գործ. Յանձնախումբին :

Յօդ. 30.— Իւրաքանչիւր Մասնաճիւղ պարտաւոր է իր նորեկ անդամի չաւելումը չայանել Գործ. Յանձնախումբին :

Յօդ. 31.— Իւրաքանչիւր Մասնաճիւղ պարտաւոր է իր հանդանակած գումարը նոյնութեամբ դրկել կեդրոնական Վարչութեան Գործ. Յանձնախումբին միջոցաւ :

Յօդ. 32.— Մասնաճիւղ մը իր ընթացիկ գործերու համար պահանջւած ծախքերը կը կատարէ իր գանձարանէն :

Յօդ. 33.— Իւրաքանչիւր Մասնաճիւղ պարտաւոր է ստանձնել «Ներխուսարդ Հայաստան»ի գործակալութիւնը՝ պահելով անոր առանձին հաշիւները :

Յօդ. 34.— Մասնաճիւղեր իրաւունք ունին հրատարակել թոուցիկներ, շրջաբերականներ, նախապէս Գործ. Յանձ.ի հաւանութեան ենթարկելէ չեստոյ : Եթէ Գործ. Յանձ.ը իր հաւանութիւնը չի տալ, պարտաւոր է իր գրաւոր պատճառարանութիւնները ներկայացնել, եւ երբ Մ-ճիւղը այդ պատճառարանութիւնները անբաւական կը սեպէ, իր փաստերով ետ կը դարձնէ Գործ. Յանձնախումբին եւ այսպէս երեք անգամ իրարու իրենց պատճառարանութիւնները ներկայացնելէն չեստոյ, վերջին պահուն Գործ. Յանձ.ը պարտաւոր է առնել խնդրոց ներքեւ եղած շրջաբերականը, ինքը տպել եւ պատճառարանութիւններով միասին ցրել Մ-ճիւղերուն :

Յօդ. 35.— Մասնաճիւղերը պարտաւոր են ի-

րենց հրաւիրած ատենախօսներուն օրինաւոր ծախքերը հոգալ :

Յօդ. 36.— Իւրաքանչիւր Մասնաճիւղ ազատ իրաւունք ունի թելադրութիւններ ընել Գործադիր Յանձնախումբին :

Յօդ. 37.— Մասնաճիւղ մը, առանց Գործ. Յանձ.ի գիտութեան եւ հաւանութեան, իրաւունք չունի կուսակ. սկզբունքային ընդհանուր խնդիրներու նկատմամբ բանակցել ուրիշ կուսակցութեանց պաշտօնական մարմիններու հետ :

Յօդ. 38.— Իւրաքանչիւր Մասնաճիւղ պարտաւոր է իր պատգամաւորի հետ իր մէկ տարւան բարոյական եւ նիւթական հաշեկչիւր դրկել Պատգամաւորական Ժողովին :

Յօդ. 39.— Մասնաճիւղերը Շրջանային Պատ. Ժողովին ձայն ունին հետեւեալ համեմատութեամբ, Կանանց 5, Արանց 7—30՝ մէկ ձայն, 31—50 երկու ձայն ու անկէ չեստոյ իւրաքանչիւր 50 մէկ ձայն :

Յօդ. 40.— Առանց ստացադրի եղած բոլոր գումարական գործերը անվաւեր են :

Յօդ. 41.— Մասնաճիւղ մը երբ իր մէկ տարւան նիւթական եւ բարոյական պարտականութեան մէջ թերացած կը լինի, (անդամավճար, պիւտճէ եւ այլն) Պատգամաւորական Ժողովին ձայն ունենալէ կը զրկուի, ի բաց առեալ, երբ թերացումի պատճառները՝ չեստ քննութեան՝ Պատգամ. Ժողովը օրինաւոր կը գտնէ :

Յօդ. 42.— Լուծւած Մասնաճիւղերու գույքերը կը մնան ընկերներու քով, իրրեւ Ս. Դ. Հնչ. Խմբի, Եթէ Գործ. Յանձ.ը յարմար կը տեսնէ :

ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յօդ. 43.— Ամերիկայի Ս. Դ. Հնչ. Մասնա-  
ճիւղերը տարին մէկ անգամ կուենան Պատգմ.  
Ժողով, որը՝ Ամերիկայի Ս. Դ. Հնչ. Մասնաճիւ-  
ղերու Բարձրագոյն Մարմինն է եւ որը կըրազի Մաս-  
նաճիւղերու վերաբերեալ բոլոր հարցերով:

Յօդ. 44.— Պատգմ. Ժողովը կը բաղկանայ Ա-  
մերիկայի Ս. Դ. Հնչակեան Մասնաճիւղերու ընտ-  
րած պատգամաւորներէն:

Յօդ. 45.— Պատգմ. Ժողովը օրինաւոր կը հա-  
մարւի երբ հրաւիրւած Մասնաճիւղերու մեծամաս-  
նութիւնը ներկայ է՝ ինչպէս նաեւ ձայներու մեծա-  
մասնութիւնը:

Յօդ. 46.— Պատգմ. Ժողովը իրաւունք ունի  
Ամերիկայի շրջանի ամեն Մասնաճիւղի ներքին  
գործերուն միջամտել:

Յօդ. 47.— Պատգմ. Ժողովի որոշումները պար-  
տաւորիչ են միայն Ամերիկայի Ս. Դ. Հնչ. Մասնա-  
ճիւղերու եւ Գործ. Յանձնախմբի համար, Կեդրո-  
նական Վարչութեան վաւերացմամբ:

Յօդ. 48.— Պատգմ. Ժողով հրաւիրողը Գործ.  
Յանձնախումբն է, որը պարտաւոր է Պատգմ. Ժո-  
ղովի գումարման տեղն ու Ժամանակը մէկ ամիս  
առաջ հաղորդել մասնաճիւղերուն ուղարկելով ա-  
նոնց նաեւ Ժողովի օրակարգը որուն վրայ մասնա-  
ճիւղերը կարող են աւելցնել իրենց կողմէ չարմար  
նկատւած ուրիշ հարցեր, նախապէս չափանել նաեւ  
իրենց մասնակցութիւնը:

Յօդ. 49.— Արտակարգ Պատգմ. Ժողով կը գու-  
մարւի՝ երբ Գործ. Յանձնախումբը անհրաժեշտ  
տեսնէ եւ ստանայ կանխաւ մասնաճիւղերու մեծա-

մասնութեան հաւանութիւնը:

Յօդ. 50.— Իւրաքանչիւր պատգամաւոր պէտք  
է որ Մասնաճիւղի մը անդամակցած լինի:

Յօդ. 51.— Իւրաքանչիւր պատգամաւոր պար-  
տաւոր է անպատճառ, առնւազն, վեց ամիս անդա-  
մակցած լինի Ս. Դ. Հնչ. Կուսակցութեան:

Յօդ. 52.— Մասնաճիւղ մը, բացի իր անդամէն  
կրնայ պատգամաւոր ընտրել հեռաւոր մի ընկերոջ՝  
նրախօսական կամ այլ հանգամանքներու պատճառով:

Յօդ. 53.— Իւրաքանչիւր պատգամաւոր պար-  
տաւոր է իր Մասնաճիւղի կնիքովը կնքւած ու դի-  
ւանի ստորագրութեամբը չանձնարարական մը ու-  
նենալ:

Յօդ. 54.— Պատգամաւոր մը Պատգմ. Ժողո-  
վին երկու ձայնէն աւելի չի կարող ներկայացնել:

Յօդ. 55.— Պատգմ. Ժողովը կընտրէ իր պատ-  
գամաւորներէն դիւան մը որուն պաշտօնավարու-  
թիւնը կը տեսէ մինչեւ նիստին վերջանալը եւ կրնայ  
վերընտրել:

Յօդ. 56.— Պատգմ. Ժողովին Դիւանը պարտա-  
ւոր է նիստերուն արձանագրութիւնը կազմել, բնա-  
զիրը պահելով ստորագրւած բոլոր պատգամաւոր-  
ներէն եւ կնքած տեղւոյն Մասնաճիւղէն, իսկ պատ-  
ճէնը Գործ. Յանձ.ի կնիքով վաւերացւած պէտք է  
զրկել Կեդրոնական Վարչութեան վաւերացելու  
համար, որմէ չետոյ պէտք է ցրել Մասնաճիւղե-  
րուն:

Յօդ. 57.— Պատգմ. Ժողովի որոշումները կը  
տրւին ձայներու մեծամասնութեամբ:

ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յօդ. 43.— Ամերիկայի Ս. Դ. Հնչ. Մասնա-  
ճիւղերը տարին մէկ անգամ կունենան Պատգմ.  
Ժողով, որը՝ Ամերիկայի Ս. Դ. Հնչ. Մասնաճիւ-  
ղերու Բարձրագոյն Մարմինն է եւ որը կգրադի Մաս-  
նաճիւղերու վերաբերեալ բոլոր հարցերով:

Յօդ. 44.— Պատգմ. Ժողովը կը բաղկանայ Ա-  
մերիկայի Ս. Դ. Հնչակեան Մասնաճիւղերու ընտ-  
րած պատգամաւորներէն:

Յօդ. 45.— Պատգմ. Ժողովը օրինաւոր կը հա-  
մարւի երբ հրաւիրւած Մասնաճիւղերու մեծամաս-  
նութիւնը ներկայ է՝ ինչպէս նաեւ ձայներու մեծա-  
մասնութիւնը:

Յօդ. 46.— Պատգմ. Ժողովը իրաւունք ունի  
Ամերիկայի շրջանի ամեն Մասնաճիւղի ներքին  
գործերուն միջամտել:

Յօդ. 47.— Պատգմ. Ժողովի որոշումները պար-  
տաւորիչ են միայն Ամերիկայի Ս. Դ. Հնչ. Մասնա-  
ճիւղերու եւ Գործ. Յանձնախմբի համար, Կեդրո-  
նական Վարչութեան վաւերացմամբ:

Յօդ. 48.— Պատգմ. Ժողով հրաւիրողը Գործ.  
Յանձնախումբն է, որը պարտաւոր է Պատգմ. Ժո-  
ղովի գումարման տեղն ու Ժամանակը մէկ ամիս  
առաջ հաղորդել մասնաճիւղերուն ուղարկելով ա-  
նոնց նաեւ Ժողովի օրակարգը որուն վրայ մասնա-  
ճիւղերը կարող են աւելցնել իրենց կողմէ չարմար  
նկատւած ուրիշ հարցեր, նախապէս չափնել նաեւ  
իրենց մասնակցութիւնը:

Յօդ. 49.— Արտակարգ Պատգմ. Ժողով կը գու-  
մարւի՝ երբ Գործ. Յանձնախումբը անհրաժեշտ  
տեսնէ եւ ստանայ կանխու մասնաճիւղերու մեծա-

մասնութեան հաւանութիւնը:

Յօդ. 50.— Իւրաքանչիւր պատգամաւոր պէտք  
է որ Մասնաճիւղի մը անգամակցած լինի:

Յօդ. 51.— Իւրաքանչիւր պատգամաւոր պար-  
տաւոր է անպատճառ, անուազն, վեց ամիս անդա-  
մակցած լինի Ս. Դ. Հնչ. Կուսակցութեան:

Յօդ. 52.— Մասնաճիւղ մը, բացի իր անգամէն  
կրնայ պատգամաւոր ընտրել հեռաւոր մի ընկերոջ՝  
նրախիւսի կամ այլ հանդամանքներու պատճառով:

Յօդ. 53.— Իւրաքանչիւր պատգամաւոր պար-  
տաւոր է իր Մասնաճիւղի կնիքովը կնքւած ու դի-  
ւանի ստորագրութեամբը չանձնարարական մը ու-  
նենալ:

Յօդ. 54.— Պատգամաւոր մը Պատգմ. Ժողո-  
վին երկու ձայնէն աւելի չի կարող ներկայացնել:

Յօդ. 55.— Պատգմ. Ժողովը կընտրէ իր պատ-  
գամաւորներէն դիւան մը որուն պաշտօնավարու-  
թիւնը կը տեւէ մինչև նիստին վերջնապէս եւ կրնայ  
վերընտրուիլ:

Յօդ. 56.— Պատգմ. Ժողովին Դիւանը պարտա-  
ւոր է նիստերուն արձանագրութիւնը կազմել, բնա-  
զիրը պահելով ստորագրւած բոլոր պատգամաւոր-  
ներէն եւ կնքւած տեղւոյն Մասնաճիւղէն, իսկ պատ-  
ճէնը Գործ. Յանձ. Ի կնիքով վաւերացւած պէտք է  
զրկել Կեդրոնական Վարչութեան վաւերացելու  
համար, որմէ չետոյ պէտք է ցրել Մասնաճիւղե-  
րուն:

Յօդ. 57.— Պատգմ. Ժողովի որոշումները կը  
տրւին ձայներու մեծամասնութեամբ:

ԳՈՐԾԱԴԻՐ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ

Յօդ. 58.— Պատգմ. Ժողովը կընտրէ Գործ. Յանձնախումբ մը բաղկացած 7—9 անդամներէ, կը ընտրէ նաեւ 5 թիկնածուներ չաջորդական կարգով, որոնք իրաւունք կունենան Գործ. Յանձ.ի անդամներուն հիւանդութեանց, հրաժարման եւ դժբաղդութեանց պարագային չաջորդել անոնց տեղը:

Յօդ. 59.— Գործ. Յանձ.ը Ամերիկայի Ս. Դ. Հնչ. Պատգմ. Ժողովի որոշումները գործադրող մարմինն է: (\*)

Յօդ. 60.— Յանուն Ամերիկայի Ս. Դ. Հնչ. չըջանի եղած պաշտօնական բոլոր չարաբերութիւնները հալ՝ եւ օտար քաղաքական կուսակցութեանց հետ, կը կատարուի Գործ. Յանձ.ի միջոցով նախօրօք մասնաճիւղերու մեծամասնութեան հաւանութիւնը ստանալով:

Յօդ. 61.— Գործ. Յանձ.ի անդամները անհատապէս եւ հաւաքարար պատասխանատու են Ամերիկայի Ս. Դ. Հնչ. Պատգմ. Ժողովին իրենց բոլոր գործունէութեանց համար:

Յօդ. 62.— Գործ. Յանձ.ը իր բոլոր որոշումները կուտայ Վարչական Ժողովով:

Յօդ. 63.— Գործ. Յանձ.ը ինքը կընտրէ իր մէջէն Ատենապետ, Ատենադպիր, Գանձապահ, Հաշուակալ, Դիւանապետ եւ Կնքապահ: Ատենապետի պաշտօնն է՝

Ա. Որոշեալ ժամանակներուն Ժողովի հրաւիր-

(\*) Ծանօթ.— Գործ. Յանձ.ի անդամները միեւնոյն ժամանակ չեն կարող տեղւոյն Մասնաճիւղի վարչութեան անդամ ըլլալ:

րել Գործ. Յանձ.ի անդամները:

Բ. Եղած բոլոր որոշումներու անթերի գործադրութեանը հսկել:

Գ. Ստորագրել իր անունը՝ եղած բոլոր պաշտօնական գրութիւններուն տակ, Ատենադպիրի հետ:

Ատենադպիրի պաշտօնն է՝

Ա. Ժողովներու արձանագրութիւնը կազմել մասնաւոր տետրակի մը մէջ:

Բ. Թղթակցութիւն կատարել:

Գ. Գործ. Յանձ.ին եկած բոլոր գրութիւնները ստանալ եւ պաշտօնակիցի մը ներկայութեամբ բանալ:

Դ. Ատենապետին հետ պաշտօնական գրութիւններու տակ ստորագրել:

Կնքապահի պաշտօնն է՝

Պահպանել Գործ. Յանձ.ի կնիքը եւ ըննել պաշտօնական բոլոր գրութիւնները: Առանց կնիքի դրութիւն մը անպաշտօն կը համարուի:

Գանձապահի պաշտօնն է՝

Ա. Գործ. Յանձ.ի անունով եկած բոլոր դրամները ստանալ փոխարէն ստացագիր տալով:

Բ. Գործ. Յանձ.ի ծախսերը հոգալ:

Գ. Ելեւմտական կանոնաւոր հաշւետմար ունենալ, իր ձեռքով եղած ծախքերուն եւ ղրկած դրամներուն ընկալագրերը ներկայացնել Պատգամաւորական Ժողովին:

Դ. Դրամական ամեն գործողութեանց տակ իր ստորագրութիւնը դնել:

Յօդ. 64.— Գործ. Յանձ.ը իր ամբողջ կազմով եւ կամ զիւսնով (Ատենապետ, Ատենադպիր, Գանձապահ, Հաշուակալ) պարտաւոր է Պատգմ. Ժողո-



վին ներկայանալու, եւ որպէս հաւաքական մարմին մէկ քէէի իրաւունք ունի:

Յօդ. 65.— Գործ. Յանձ.ը պարտաւոր է ունենալ բոլոր Մասնաճիւղերու վարչութեանց անունները:

Յօդ. 66.— Մասնաճիւղերը իրենց տարեկան անդամավճարներու եւ մուտքերու հասույթին մէկ երրորդէն իրենց տեղական ծախքերը հոգալէն չետոյ 25 տօլարէն աւելին կը խրկեն Գործ. Յանձնախումբին իր ծախքերուն համար, ինչպէս եւ «Երիտ. Հայ.»ի բաժնեկիները եւ հասույթը ամբողջութեամբ:

Յօդ. 67.— Գործ. Յանձ.ը իր ընթացիկ գործերը կարգադրելէն չետոյ աւելցած դրամի մէկ քառորդը իր տրամադրութեան տակ պահելով մնացեալը պարտաւոր է զրկել Կեդրոնական Վարչութեան:

Յօդ. 68.— Գործ. Յանձ.ը իր սկզբունք իրաւունք չունի մասնաճիւղերու ներքին գործերուն միջամտել, ի բաց առեալ հետեւեալ պարագաներէ.

Ա. Երբ մասնաճիւղի մը ընթացքը կը վտանդէ Կուսակցութեան սկզբունքները եւ շահերը:

Բ. Երբ մասնաճիւղը միջամտութիւն կը խնդրէ:

Գ. Երբ մասնաճիւղի մեծամասնութիւնը միջամտութիւն կը պահանջէ:

Յօդ. 69.— Գործ. Յանձ.ը նորակազմ մասնաճիւղերու կազմութիւնը ի դիտութիւն կը չարտարարէ մասնաճիւղերուն եւ կը հաղորդէ Կեդր. Վարչութեան, եւ անկէ վաւերացում կստանայ:

Յօդ. 70.— Գործ. Յանձ.ը պարտաւոր է ունե-

նալ վիճակադրական տոմար մը, ուր արձանագրած պոէք է ըլլայ մասնաճիւղերու անունները, անդամներուն թիւը, անոնց անունները, տարիքը, պարագմունքները (թէ անցեալ եւ թէ ներկայ), ամուսնացած թէ ամուրի, առողջ թէ վատառողջ, եւ ո՞ր տեղացի լինելը:

Յօդ. 71.— Գործ. Յանձ.ի պաշտօնավարութեան շրջանը կը տեւէ մինչեւ չաջորդ Պատգմ. Ժողովը: Գործ. Յանձ.ի անդամները թոշակ չեն ստանար, բացի այն անդամներէն, որոնք միմիայն Կուսակցական գործով կ'ըրադին:

Յօդ. 72.— Գործ. Յանձ.ի պաշտօնավարութեան ժամանակը դադրած կը համարուի երբ Պատգ. Ժողովի դիւանը կընտրուի:

Յօդ. 73.— Գործ. Յանձ.ը ի ներկայութեան բոլոր պատգամաւորներու կը բանայ Պատգմ. Ժողովը եւ կը կատարէ պատգամաւորներու վկայագրերու նախնական քննութիւնը:

Յօդ. 74.— Գործ. Յանձ.ը եթէ առանց ունե բանաւոր պատճառի թերանայ Պատգմ. Ժողով գումարել՝ մասնաճիւղերը ազատ իրաւունք ունին, փոխադարձ համաձայնութեամբ եւ ձայներու մեծամասնութեամբ, առանց հրաւերի սպասելու գումարել Պատգմ. Ժողովը՝ իր որոշեալ տեղը:

Յօդ. 75.— Գործ. Յանձ.ը լուծուած կը համարուի.

Ա. Երբ իր անդամներու թիւը 5-էն պակաս է:

Բ. Երբ մասնաճիւղերու մեծամասնութիւնը կը պահանջէ Պատգմ. Ժողով գումարելով ընտրութիւն կատարել:

«ԵՐԻՏԱՍԱՐԻ ՀԱՅԱՍՏԱՆ»

Յօդ. 76.— «Երիտ. Հայ.»ը Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան սեփականութիւնն է (հնչպէս նաեւ խմբագրական գոյքեր եւ տպագրական բոլոր գործիքները) եւ օրկանը նոյն Կուսակցութեան Ամերիկայի շրջանակին:

Յօդ. 67.— «Երիտ. Հայ.»ը կզրադի չեղափոխական, քաղաքական եւ սօցիալիստական հարցերով:

Յօդ. 78.— «Երիտ. Հայ.»ի ծախքերը կը հոգացնին բաժանորդագներէ եւ ծախւածի հասոյթէն:

Յօդ. 79.— «Երիտ. Հայ.»ը կը վարէ Գործ. Յանձ.ը, իսկ Խմբագիրը՝ որպէս գործիչ՝ մէկ ձայնով միայն կը մասնակցի խմբագրական գործերուն մէջ:

Յօդ. 80.— Խմբագրութեան վերաբերեալ բոլոր հարցերը կորուչին Գործ. Յանձ.ի ձայներու մեծամասնութեամբ:

Յօդ. 81.— Գործ. Յանձ.ը կարող է բացի «Երիտ. Հայ.»էն հրատարակել ե՛ւ զանազան գրքեր, թուղթիկներ Կուսակցութեանս ոգւոյն եւ ուղղութեան համաձայն՝ նախապէս ստանալով կեդր. վարչութեան հաւանութիւնը:

ԳՈՐԾԻՉՆԵՐ

Յօդ. 82.— Ընկեր թէ ընկերուհի գործիչներ Ամերիկայի Ս. Դ. Հնչակեան շրջանի պրոպականդիստ ընկերներն են, որոնք կընտրուին Պատգմ. Ժողովի մէջ, մի որոշ ժամանակով, գործիչ կարող են ընտրուիլ նաեւ Գործ. Յանձ.ի կողմէն չարմար տես-

նրած ընկերներ կամ ընկերուհիներ երբ կարիքը օտիպողական է:

Յօդ. 83.— Գործիչները Գործ. Յանձ.էն կըստանան իրենց յատկացած թոշակը (ամուրիները պէտք է ստանան 12—13 տօլար, ամուսնացեալները 15—18, իսկ այն գործիչները որ երկար ճամբորդութեան կ'սկսին պէտք է ստանան երեք տօլարի լաւելում, իսկ ճանապարհածախսերը կ'ստանան Գործ. Յանձնախմբէն):

Յօդ. 84.— Գործիչները իրաւունք չունին ունէ դրամական դանձում ընել մասնաճիւղերէ եւ կամ ընկերներէ չանուն «Երիտ. Հայ.»ի եւ կամ Ս. Դ. Հնչ. Կուսակցութեան:

Յօդ. 85.— Գործիչները իրաւունք չունին առանց Գործ. Յանձ.ի գիտութեան եւ հաւանութեան ունէ բանակցութիւն կամ կարգադրութիւն ընել Կուսակցութեանս անունով հայ եւ օտար կուսակցութեանց հետ:

Յօդ. 86.— «Երիտասարդ Հայաստան»ի բոլոր գոյքերը, Գործադիրի առիւնները, գրքերը, տպագրական մեքենաները, տառերը եւն. բոլորն ալ պէտք է մանրամասն թիւերով եւ իրենց արժէքներով ցուցադրել առանձինն տոմարի մը մէջ, որը ամեն պատգամաւորական ժողովի քննելով, կ'ստորագրուի ու կը չանձնի նորընտիր Գործ. Յանձնախմբին:

Յօդ. 87.— Շրջանակային ժողովները ամեն Մասնաճիւղի կատարեալ իրաւունքը ըլլալով ունէ արգելքի ներքեւ պէտք չէ դրուի, որուն որոշումները սոսկ թելադրութիւններ կընան ըլլալ Մասնաճիւղերուն:

Յօդ. 88.— Գործադիր Յանձնախումբը ազատ է  
ամեն ատեն խորհրդակցական ժողով գումարել,  
հրատապ հարցերու շուրջ՝ կանչել իր մօտ չբջաննե-  
րէն կարող ընկերներ եւ անոնց խորհուրդները ըս-  
տանալ եւ որոշումներուն ինքը պատասխանատու  
մնալ:

Ս. Դ. ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԱԿ



2013  
ՀՀ Ազգային գրադարան



7043  
NL0040361

